

# ԾՈՎԸ

ԱԼԻՔԵԱՆԻ

## I

Նալում եմ ծովի ծածան երեսին՝  
Կորչում են իսկոյն պատող ինձ մտքեր,  
Նորա ալիքներ շարժուող միասին  
Որսում են հոգիս, գրաւում իմ աչքեր։

Շողեր արևի զարկւում են մեղմիկ  
Ծովի մանրածուփ շարժուն հալելուն.  
Նալում եմ երկայն լոիկ ու մնջիկ՝  
Դիտում եմ անյագ և չեմ կշտանում։

Ահա մի ալիք շողաց առջևիս.  
Եւ ես դէպի նա աչքերս դարձուցի.  
Ալիքը, կարծես, ժամաց երեսիս,  
Ես ինձ մոռացալ՝ ուրախ ճշացի։

Զըռած աչքերով նալում եմ ծովին՝  
Բայց չկայ իմ պըտուած ալիքը սիրուն.  
Յանկարծ նա կորաւ, հանգաւ գլխովին,  
Բանեց նորա տեղ ուրիշը փայլուն։

Անվերջ են խաղեր, շարժում ջրալին.  
Երկայն նալելով ես ինքս, կարծես,  
Ապրում եմ անվերջ կետնքով ծովալին,  
Ջգում եմ օրօր, ծփում եմ նոյնպէս։

Ծովի անսահման ոլժի առաջեւ,  
Ինձ թուլ եմ զգում, անոյժ, փոքրոգի.  
Գիտեմ, որ ալիք անդամ մի թեթև,  
Կարող չեմ փոխել ըստ իմ հաճուքի:

## II

Սլանում է արագ կոկիկ շոգենաւ,  
Տանում ինձ հեռու դէսի կղզիներ.  
Ինձ քաղցր է թւում ալդպէս ճեմարշաւ,  
Ծնում է իմ մէջ յանդուգն միտումներ:

Տես. նաւը ահա ալիք է ճեղքում,  
Գիտէ նա շաւիդ ուղիդ պահպանել.  
Մեծ ծովն ետևից մռունչ է հանում,  
Բայց մեզ նա արգելք կարող չէ լինել:

Եւ ծովը նաւի տակ շատ է գալարւում,  
Եւ մէջք ուռեցնում, ընկնում, բարձրանում.  
Արդեօ՞ք կլանել է մեզ աշխատում,  
Թէ զուարձ և ուրախ նա պար է խաղում:

Ալդ մեք չ'գիտենք և չենք անհանգիստ,  
Առաջ ենք գնում անհոգ մեք ամենք.  
Բայց ալն լաւ գիտենք, որ ալդ ահալից  
Ծովին իշխելու մեք էլ ոլժ ունենք: